


Դուք աշխատո՞ւմ եք արհեստական սալաքարերի հետ



Շնչառական համակարգը սիլիցիումի փոշուց պաշտպանելու ուղեցույց

Սիլիցիումի փոշին խիստ թունավոր նյութ է, որը կարող է հանգեցնել մահացու հիվանդությունների, օրինակ՝ սիլիկոզի: Աշխատողները կարող են շնչել բյուրեղային սիլիցիումի փոշի, երբ կտրում, ծակում կամ տաշում են արհեստական սալաքարեր, որոնք հաճախ օգտագործվում են սեղանածածկերի (countertops) համար: Ճիշտ շնչադիմակ (ռեսպիրատոր) կրելը կարևոր է սիլիցիումի փոշի շնչելուց պաշտպանվելու համար:

Բոլոր աշխատողներն իրավունք ունեն պահանջել և կրել անհատական պաշտպանիչ միջոցներ՝ աշխատավայրում հայտնի վտանգավոր նյութերի հետ շփումը կանխելու համար: Գործատուները պետք է անվճար տրամադրեն շնչառական միջոցներ և իրականացնեն շնչառական համակարգի պաշտպանության ծրագիր: Ծրագիրը պետք է ներառի ծրագրի նշանակված կառավարիչ, շնչառական միջոցների ընտրության ընթացակարգեր, բժշկական գնահատումներ, ուսուցում, համապատասխանության թեստ և գրանցված տվյալների պահպանում: Շնչառական համակարգի պաշտպանության մասին լրացուցիչ տեղեկությունների համար սկանավորեք ստորև ներկայացված QR կոդը կամ այցելեք www.dir.ca.gov/dosh/respiratory-silica-FAQ.html:



publichealth.lacounty.gov/silicosis/

(Armenian)



Դուք աշխատո՞ւմ եք արհեստական սալաքարերի հետ Շնչառական համակարգը սիլիցիումի փոշուց պաշտպանելու ուղեցույց

Քարի մշակման համար լավագույն շնչադիմակն ընտրելը կարևոր է սիլիցիումի փոշու հետ շփումը նվազագույնի հասցնելու համար

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ



Դեմքին կիպ նստող, դեմքն ամբողջությամբ ծածկող, մարտկոցով աշխատող և օդը զտող շնչադիմակ (PAPR)

- Պահանջվում է CAL/OSHA-ի կողմից:
- Պաշտպանում է բարձր վտանգավորության աշխատանքների ժամանակ՝ ներառյալ արհեստական քար կտրելիս, ծակելիս, մանրացնելիս, հղկելիս և տաշելիս:
- Եթե հաստատվում է կամ կասկած կա, որ աշխատողը սիլիկոզ ունի, ապա գործատուն պետք է ապահովի դեմքն ամբողջությամբ ծածկող, դեմքին կիպ նստող, թթվածին մատակարարող և շնչառությանը հարմարվող շնչադիմակ կամ այնպիսի շնչադիմակ, որն առաջարկում է բուժաշխատողը:



Դեմքին թույլ նստող, մարտկոցով աշխատող և օդը զտող շնչադիմակ (PAPR)

- Պահանջվում է CAL/OSHA-ի կողմից:
- Պաշտպանում է բարձր վտանգավորության աշխատանքների ժամանակ՝ ներառյալ արհեստական քար կտրելիս, ծակելիս, մանրացնելիս, հղկելիս և տաշելիս:
- Սրան զուգահեռ՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ պետք է ստուգվի օդի որակը՝ ապահովելու համար, որ աշխատողների շփումը սիլիցիումի փոշու հետ մշտապես լինի Cal/OSHA-ի ստանդարտներից ցածր:

ՄԱՍՆԱԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ



Դեմքն ամբողջությամբ ծածկող առաձգական շնչադիմակ

- Պաշտպանում է քարի հետ բարձր վտանգավորության աշխատանքների ժամանակ:
- Սրան զուգահեռ՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ պետք է ստուգվի օդի որակը՝ ապահովելու համար, որ աշխատողների շփումը սիլիցիումի փոշու հետ մշտապես լինի Cal/OSHA-ի ստանդարտներից ցածր:



Դեմքի կեսը ծածկող առաձգական շնչադիմակ

- Քարի հետ բարձր վտանգավորության աշխատանքների ժամանակ պաշտպանում է սիլիցիումի փոշուց, երբ զուգահեռաբար օգտագործվում են խոնավությունն ապահովող միջոցներ, օրինակ՝ ջուր մատակարարող համակարգներ կամ գործիքներ:

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ



N-95 շնչադիմակ

- Չպետք է օգտագործվի շնչառական համակարգը սիլիցիումի փոշուց պաշտպանելու համար:
- Չի ապահովում պատշաճ պաշտպանություն սիլիցիումի փոշուց:

Հրաժարում պատասխանատվությունից: Համաձայն Cal/OSHA-ի ստանդարտների՝ շնչառական համակարգը սիլիցիումի փոշուց պաշտպանելու համար պահանջվում են դեմքին կիպ նստող և դեմքին թույլ նստող PAPR շնչադիմակներ (ռեսպիրատորներ): Թվարկված մյուս շնչադիմակները չեն ապահովում պատշաճ պաշտպանություն սիլիցիումի փոշուց:

(Armenian)

